Social Security

Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը

www.socialsecurity.gov

Ձեր Սոցիալական Ապահովության Համարն Ու Քարտը

Սոցիալական Ապահովության համարը կարեւոր է, որովհետեւ առանց դրա դուք չեք կարող աշխատիլ եւ Սոցիալական Ապահովության կամ այլ պետական նպաստներ ստանալ: Շատ ուրիշ հաստատություններ, օրինակ՝ դրամատուններ եւ վարկային ընկերություններ, նույնպես պահանջում են ձեր Սոցիալական Ապահովության համարը:

Եթէ դուք Միացյալ Նահանգների քաղաքացի չեք բայց բնակում եք այստեղ, ձեզ նույնպես կարող է անհրաժեշտ լինի Սոցիալական Ապահովության համար ունենալը: Կարդացեք *Սոցիալական ապահովության համարներ՝ ոչ-քաղաքացիների համար*, (Հրատարակության համար 05-10096-AM): Եթէ դուք ժամանակավորապես գտնվում եք Միացյալ Նահագներում աշխատելու նպատակով, կարդացեք *Օտարերկրյա աշխատողներ և սոցիալական ապահովության համարներ* (Հրատարակության համար 05-10107-AM):

Ինչպե՞ս կարող եմ համար եւ քարտ ստանալ

Սոցիալական Ապահովության քարտ ստանալու համար դուք պետք է՝

- Լրացնեք *Սոցիալական Ապահովության Վարչություն Սոցիալական ապահովության քարտի դիմում* (SS-5-AM ձեւաթուղթ) եւ
- Ներկայացնեք բնագիր փաստաթղթեր, որոնք հաստատում են ձեր
  - — Քաղաքացիությունը կամ Ամերիկայի Միացյալ Նահանգներու մէջ օրինավոր ապրելու կարգավիճակը (ներառյալ Հայրենիքի Ապահովության Գրասենյակի (Department of Homeland Security/DHS) կողմից Միացյալ Նահանգներում աշխատելու իրավունքի թույլտվությունը).
  - — Տարիքը եւ
  - — Ինքնությունը:

Այնուհետեւ, ներկայացրեք կամ փոստով ուղարկեք ձեր լրացված դիմումն ու փաստաթղթերը ձեր տեղական Սոցիալական Ապահովության գրասենյակին:

Քաղաքացիության կամ ներգաղթի կարգավիճակ. Միայն որոշակի փաստաթղթեր կարող են ընդունվել որպես ԱՄՆ քաղաքացիության հաստատում: Դրանց թվում են՝ ԱՄՆ-ում տրված ծննդյան վկայականը, ԱՄՆ անձնագիրը, հպատակագրման վկայականը կամ քաղաքացիության վկայականը: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, ապա Սոցիալական

ապահովության վարչությունը կպահանջի ԱՄՆ ներգաղթի Ձեր ընթացիկ փաստաթղթերը: Ընդունելի փաստաթղթերի թվում են Ձեր

- Ձեւաթուղթ I-551-ը (ներառում է մեքենայով կարդացվող ներգաղթի վիզան որ գտնվում է ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի մէջ).
- I-94-ը ձեր օտարերկրյա ոչ ժամկետանց անցագրի հետ կամ
- աշխատանքի թույլտվությունը՝ DHS-ից (I-766)

Միջազգային ուսանողները պետք է ներկայացնեն յաւելյալ փաստաթղթեր: Յաւելյալ տեղեկության համար կարդացեք *Սոցիալական Ապահովության Համարներ* հրատարակությունը (Հրատարակության համար 05-10181-AM):

Տարիքը. Դուք պետք է ներկայացնեք Ձեր ծննդյան վկայականը: (Դրա առկայության դեպքում՝ պարտավոր եք ներկայացնել այն): Եթե ծննդյան վկայական չունեք, մենք կարող ենք հնարավորություն ունենալ ընդունելու.

- կրոնական հաստատության կողմից մինչև Ձեր հինգամյակն արված գրառումը, որում նշված է Ձեր ծննդյան ամսաթիվը
- ԱՄՆ հիվանդանոցային գրառումը՝ Ձեր ծննդյան մասին
- Ձեր անձնագիրը կամ
- ԱՄՆ ներգաղթի փաստաթուղթը:

Ինքնության հաստատում. Ձեր ինքնությունը հաստատելու համար մենք կարող ենք ընդունել միայն որոշակի փաստաթղթեր: Ընդունելի

փաստաթուղթը պետք է լինի վավերական (ոչ ժամկետանց), ցույց տալով ձեր անունը, ազգանունը եւ ինքնությունը հաստատող տեղեկություն: Ցանկալի է որ այն ունենա վերջերս հանված լուսանկար մը: Որպես ինքնության հաստատում՝ Սոցիալական Ապահովությունը ձեզնից պահանջում է ձեր ԱՄՆ վարորդական իրավունքը, նահանգի կողմից տրված ինքնությունը հաստատող ոչ վարորդական քարտը կամ ԱՄՆ անցագիրը: Եթէ դուք չունեք մեր պահանջած փաստաթղթերը, մենք ընդունում ենք այլ փաստաթղթեր, ներառյալ.

- Գործատիրոջ կողմից տրված աշխատանքային քարտ.
- Դպրոցի կողմից տրված ինքնությունը հաստատող ուսանողական քարտ.
- Առողջության ապահովագրության քարտ (ոչ Մէտիքէրի քարտը).
- ԱՄՆ զինվորական ինքնության քարտ.
- Որդեգրման հրամանագիր.
- Կյանքի ապահովագրության պայմանագրություն կամ
- Ամուսնության վկայականը (միայն անվան փոփոխության դեպքերում):

Բոլոր փաստաթղթերը պետք է լինեն բնագիր կամ վավերացված այն կազմակերպության կողմից որ պանոնք պարենաւորած է: Մենք չենք կարող ընդունել կրկնօրինակներ կամ նոտարի կողմից հաստատված փաստաթղթեր: Մէկ փաստաթուղթը մենք կարող ենք օգտագործել երկու նպատակով: Օրինակ, մենք կարող ենք Հայրենիքի

Ապահովության Գրասենյակի կողմից ձեզ տրված աշխատանքի թույլտվությունը օգտագործել որպես աշխատելու իրավունք եւ ինքնությունը հաստատող վկայություն: ***Այնուամենայնիվ, դուք պետք է ներկայացնեք երկու տարբեր փաստաթղթեր:***

Մենք կ՛ուղարկենք ձեր Սոցիալական Ապահովության համարն ու քարտը անհրաժեշտ տեղեկությունները ստանալուց եւ փաստաթղթերը ստուգելուց ետք:

Որքա՞ն է ծախսը

Սոցիալական ապահովության համարն ու քարտը տրվում են անվճար: Եթե որևէ մեկը կապվի Ձեզ հետ և ցանկանա համարի կամ քարտի դիմաց գումար գանձել, հիշեք, որ Սոցիալական ապահովության վարչության այս ծառայություններն անվճար են: Դրամաշորթության փորձի մասին կարող եք հաղորդել՝ զանգահարելով Գլխավոր տեսուչի գրասենյակի թեժ գծին՝ **1-800-269-0271** հեռախոսահամարով:

Արդյո՞ք գոյություն ունեն տարբեր տեսակի քարտեր

Մենք տրամադրում ենք երեք տեսակի Սոցիալական Ապահովության քարտեր: Բոլոր քարտերի վրա նշվում է ձեր անունը, ազգանունը եւ Սոցիալական Ապահովության համարը:

- Առաջին տեսակի քարտի վրա նշվում է ձեր անունը, ազգանունը եւ Սոցիալական Ապահովության համարը եւ ձեզ

թույլ է տալիս աշխատելու առանց սահմանափակումների: Մենք դրանք տալիս ենք.

— ԱՄՆ քաղաքացիներին եւ

— Մշտական հիմունքներով Միացյալ Նահանգներում օրինական կարգով ընդունված մարդկանց:

- Երկրորդ տեսակի քարտի վրա նշվում է ձեր անունը, ազգանունը եւ համարը, ինչպես նաեւ “VALID FOR WORK ONLY WITH DHS AUTHORIZATION”—«ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՎԱՎԵՐԱԿԱՆ Է ՄԻԱՅՆ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՄԲ» ծանուցումը: Նման տեսակի քարտ մենք տալիս ենք Միացյալ Նահանգներում օրինական կարգով ժամանակավորպես ընդունված մարդկանց, որոնք Հայրենիքի Ավահովության Գրասենյակից ունեն աշխատելու թույլտվություն:
- Երրորդ տեսակի քարտի վրա նշվում է ձեր անունը, ազգանունը եւ համարը, ինչպես նաեւ “NOT VALID FOR EMPLOYMENT”—«ՎԱՎԵՐԱԿԱՆ ՉԷ ԱՇԽԱՏԵԼՈՒ ՀԱՄԱՐ» ծանուցումը: Մենք տալիս ենք այս օտարերկրյա մարդկանց.

— Որոնք օրինական կարգով ընդունված են Միացյալ Նահանգներում՝ առանց աշխատանքի թույլտվության Հայրենիքի Ավահովության Գրասենյակի կողմից, սակայն կարիք ունեն Սոցիալական Ապահովության համարի աշխատանքի հետ կապ չունեցող պատճառավ, կամ

— Որոնք համարի կարիք ունեն պետական օրենքի համեմատ նպաստ կամ ծառայություն ստանալու համար:

Ես ինչպես կարող եմ երեխայիս համար Սոցիալական Ապահովության համար ստանալ

Լավագոյն ձեւն է Սոցիալական Ապահովության համարը ստանալ երեխայի ծննունդի ժամանակ: Դուք կարող եք քարտի դիմումը ներկայացնել նոյն ժամանակ երբ երեխայի ծննդյան վկայականը ստանալու պահանջքը ներկայացնեք: Ծննդյան վկայականը տվող պետական գործակալությունը ձեր երեխայի տեղեկությունը կը տրամադրի մեզ եւ մենք ձեզ կուղարկենք Սոցիալական Ապահովության քարտը:

Կարող եք նաև սպասել և դիմումը ներկայացնել Սոցիալական ապահովության որևէ գրասենյակ: Սպասելու դեպքում, Դուք պետք է ներկայացնեք Ձեր երեխայի տարիքը, անձը և ԱՄՆ քաղաքացիության կարգավիճակը հաստատող փաստաթղթեր: Եթե դիմում եք այլ անձի անունից, ապա պետք է ներկայացնեք փաստաթղթեր, որոնք ցույց են տալիս, թե ինչ ազգակցական կապ կամ պատասխանատվություն ունեք այդ անձի հանդեպ: Դուք պետք է ներկայացնեք նաև Ձեր անձը հաստատող փաստաթուղթ: Մենք պետք է ստուգենք Ձեր երեխայի ծննդյան պաշտոնական գրառումը, ինչը կարող է 12 շաբաթով երկարաձգել քարտի թողարկման համար անհրաժեշտ ժամանակը: Ծննդյան գրառումն ստուգելու

համար Սոցիալական ապահովության վարչությունը կդիմի գրառումը կատարող գրասենյակին:

12 տարեկան կամ ավելի բարձր տարիքի որևէ անձ, ով դիմել է՝ սոցիալական ապահովության համար ստանալու, պետք է անձամբ ներկայանա սոցիալական ապահովության գրասենյակ՝ հարցազրույցի, անգամ այն դեպքում, եթե նրա դիմումն իր փոխարեն ստորագրելու է ծնողը կամ խնամակալը:

Որդեգրում. Մենք կարող ենք Սոցիալական Ապահովության քարտ ուղարկել ձեր որդեգրած երեխայի համար, սակայն նախնտրելի է որ սպասեք մինչեւ որդեգրումի ավարտումը: Եթէ որդեգրության ընթացքում դուք ցանկանում եք ձեր երեխան ընդգրկել ձեր հարկային հայտարարագրման մեջ, դուք պետք է Հարկային Վարչությունից (Internal Revenue Service—IRS) պահանջեք Թուղթ W-7A, *Application for Taxpayer Identification Number for Pending U.S. Adoptions—Ամերիկայի Միացյալ Նահանգների Որդեգրության Ընթացքում Հարկ Վճարողի Ինքնության Համար Ստանալու Դիմումնագիր.* Յաւելեալ տեղեկությունների համար կարդացեք *Սոցիալական Ապահովության Համարներ Երեխաների Համար Համար* հրատարակությունը (Հրատարակության համար 05-10023-AM):

Ինչ անեմ, եթե անունս կամ ազգանունս փոխվել է:

Եթե Ձեր անունը կամ ազգանունը փոխվել է օրինական կարգով՝ ամուսնության, ամուսնալուծության, դատական կարգադրության կամ այլ պատճառով, անհրաժեշտ է տեղեկացնել Սոցիալական ապահովության վարչությանը, որպեսզի ուղղված տվյալներով քարտ ստանաք: Եթե Դուք աշխատում եք, ապա փոփոխության մասին տեղեկացրեք նաև գործատուին: Անվան կամ ազգանվան փոփոխության մասին մեզ չհայտնելու դեպքում՝ հնարավոր է.

- ուշացվի Ձեր հարկերի վերադարձումը և
- Ձեր աշխատավարձը սխալ արտացոլվի սոցիալական ապահովության գրառումներում, ինչի հետևանքով կարող են նվազել հետագայում Ձեզ վճարվելիք սոցիալական ապահովության նպաստները:

Եթե ուզում եք սոցիալական ապահովության քարտի վրա փոխել Ձեր անունը կամ ազգանունը, պետք է անվան կամ ազգանվան օրինական փոփոխությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնեք: Սոցիալական ապահաովության վարչությունը կարող է որպես Ձեր անվան օրինական փոփոխության ապացույց ընդունել հետևյալ փաստաթղթերը.

- ամուսնության վկայականը
- ամուսնալուծության որոշումը
- հպատակագրման վկայականը, որում նշված է Ձեր նոր անունը կամ
- դատարանի որոշումը՝ անվան փոփոխության մասին:

Եթե փաստաթուղթը, որը Դուք ներկայացնում եք՝ որպես Ձեր անվան օրինական փոփոխության հաստատում, բավարար տեղեկություններ չի պարունակում՝ մեր գրառումներում Ձեր անձը նույնականացնելու համար, կամ եթե Ձեր անունը կամ ազգանունը փոխվել է ավելի քան երկու տարի առաջ (մինչև 18 տարեկան անձանց դեպքում՝ չորս տարի առաջ), ապա Դուք պետք է մեզ ներկայացնեք անձը հաստատող փաստաթուղթ՝ Ձեր հին անվամբ կամ ազգանվամբ (ինչպես այն նշված է մեր գրառումներում): Մենք կընդունենք Ձեր հին անվամբ կամ ազգանվամբ ժամկետանց փաստաթղթերը:

Եթե Դուք հին անվամբ կամ ազգանվամբ անձը հաստատող փաստաթուղթ չունեք, մենք կընդունենք անձը հաստատող գործող փաստաթուղթ՝ նոր անվամբ կամ ազգանվամբ, եթե կարողանանք հաստատել Ձեր անձը մեր գրառումներում:

Քաղաքացիություն. Դրանից բացի, եթե Դուք այլ երկրում ծնված ԱՄՆ քաղաքացի եք, և մեր գրառումները ցույց չեն տալիս, որ Դուք քաղաքացի եք, ապա Ձեզանից կպահանջվի Ձեր ԱՄՆ քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ ներկայացնել: Եթե Դուք ԱՄՆ քաղաքացի չեք, Սոցիալական ապահովության վարչությունը կպահանջի ներգաղթի Ձեր ներկայիս փաստաթղթերը:

Ձեր նոր քարտը կունենա նույն համարը, ինչ նախկին քարտը, բայց կկրի Ձեր նոր անունը:

(շրջել)

Ես ինչպես ստուգեմ իմ տվյալների ճշգրտությունը

Ձեր գործատէրը ամէն տարի Սոցիալական Ապահովության ուղարկում է ձեր W-2 թղթիկը (*Wage and Tax Statement*—Աշխատավարձի եւ Հարկերի Հաշուեցույց): W-2-ի վրա նշված անունը եւ համարը մենք համեմատում ենք մեզ մօտ եղող ձեր տեղեկությունների հետ: W-2-ի վրա նշված եկամուտը մենք ավելացնում ենք ձեր Սսոցիալական Ապահովության աշխատանքային պատմության վրա:

Կարեւոր է որ ձեր Սոցիալական Ապահովության քարտի վրա նշված անունն ու համարը համապատասխանեն ձեր գործատիրոջ աշխատավարձի ցուցակներին եւ W-2-ին: Այն ատեն մենք կարող ենք ձեր եկամուտը ավելացնել ձեր աշխատանքային պատմության վրա: Դուք ինքներդ պետք է ստուգեք որ ձեր Սոցիալական Ապահովության քարտի վրայի տվյալները համապատասխանեն ձեր գործատիրոջ տվյալների հետ: Եթէ ձեր Սոցիալական Ապահովության քարտի վրա սխալ կա, դիմեք որեւէ Սոցիալական Ապահովության գրասենյակ՝ որպեսզի ուղղեն սխալը: Ստուգեք W-2 թղթիկը վստահելու որ նրանում նշված տվյալները ճիշտ են: Եթէ սխալ կա, ձեր գործատիրոջ ճիշտ տեղեկությունը տվեք:

Կարող եք նաև ստուգել Ձեր վաստակած գումարը՝ Սոցիալական ապահովության Ձեր հաշվետվությունում: Հաշվետվության առցանց տարբերակից կարող են օգտվել առնվազն 18 տարեկան աշխատող անձինք: Ձեր հաշվետվությունը տեսնելու համար այցելեք ***www.socialsecurity.gov/mystatement*** և ստեղծեք հաշիվ:

Ինչ անեմ եթէ փոխվել է իմ ներգաղթի կարգավիճակը կամ քաղաքացիությունը

Եթե Ձեր ներգաղթի կարգավիճակը փոխվել է, կամ Դուք դարձել եք ԱՄՆ քաղաքացի, անհրաժեշտ է այդ մասին տեղյակ պահել Սոցիալական ապահովության վարչությանը, որպեսզի մենք թարմացնենք Ձեր տվյալները: Ձեր ներգաղթի կամ քաղաքացիության կարգավիճակը ճշգրտելու համար՝ Դուք պետք է ներկայացնեք Ձեր նոր կարգավիճակը կամ քաղաքացիությունն ապացուցող փաստաթղթեր: Նոր քարտ տալու համար, որպես քաղաքացիության ապացույց ընդունում ենք միայն որոշակի փաստաթղթեր, այդ թվում՝ Ձեր:

Ինչ անել քարտը կորցրելու կամ գողացվելու դեպքում

Դուք կարող եք անվճար փոխարինել ձերն ու ձեր երախայի քարտը, եթէ այն կորցրել եք կամ գողացել են: Սակայն, մէկ տարվա ընթացքում երեք անգամից աւել չեք կարող փոխարինել, իսկ ձեր կյանքի ընթացքում 10 քարտից աւել չեք կարող ստանալ: Անունի օրինական փոփոխություններն ու այլ բացառություններ հաշվի չեն առնվում: Օրինակ, ոչ քաղաքացու կարգավիճակի փոփոխությունները, որոնք պահանջում են քարտի նորոքումը, հաշվի չեն առնվում: Նաեւ եթէ ապացուցեք որ քարտը ձեզ անհրաժեշտ է լուրջ դժվարություն կանխելու համար, դարձեալ կարող եք սահմանափակ քարտերից աւել ստանալ:

Փոխարինող քարտ ստանալու համար ձեզ անհրաժեշտ է.

- Լրացնել *Սոցիալական Ապահովության քարտ ստանալու դիմումնագիր* (SS-5-AM ձեւաթուղթ)

- Ներկայացնել անձը հաստատող ոչ ժամկետանց բնօրինակ փաստաթուղթ, ցանկալի է՝ ոչ վաղուցվա լուսանկարով,
- Ցույց տալ ձեր ԱՄՆ քաղաքացիության փաստաթուղթը, եթե դուք ծնվել եք Միացյալ Նահանգներից դուրս եւ ձեր քարտը ստանալու ատեն ցույց չեք տվել քաղաքացիության ապացույց եւ
- Ցույց տալ ձեր ընթացիկ ոչ քաղաքացու օրինական կարգավիճակի փաստաթուղթը, եթե դուք ԱՄՆ քաղաքացի չեք:

Ձեր փոխարինման քարտը կպարունակի նույն անունը, ազգանունը եւ համարը, ինչպէս նախորդ քարտը:

Ինչպէս պաշտպանեմ իմ Սոցիալական Ապահովության համարը

Ձեր Սոցիալական Ապահովության համարը գաղտնի պետք է պահեք եւ զգուշ լինեք թէ որոնց ցոյց եք տալիս այն (նույնիսկ եթէ այն գործածում եք նպաստի կամ ծառայության համար): Դուք պետք է ապահով տեղում պահեք ձեր Սոցիալական Ապահովության քարտը այլ կարեւոր փաստաթղթերի հետ: Քարտը ձեզ հետ վերցրեք միայն այն դեպքում, երբ հարկավոր է զայն ցույց տալ գործատիրոջ կամ ծառայություններ տրամադրողին:

Մենք ալ պաշտպանում ենք ձեր համարը որպէսզի օտարներ չօգտագործեն զայն: Օրինակ՝ մենք պահանջում եւ ուշադիր գննում ենք ինքնության փաստաթղթերը այն անձերից, որոնք դիմում են կորսված կամ գողցված քարտը փոխարինելու կամ քարտում փոփոխություն կատարելու: Այդ ընելու պատճառներից մէկը այն է, որ թույլ չտանք որեւէ մէկին խարդախ ճանապարհով Սոցիալական Ապահովության համար

ստանալը եւ կեղծ ինքնություն հաստատելը: Ձեր Սոցիալական Ապահովության տվյալները մենք գաղտնի պահում ենք, բացառությամբ այն դեպքերի, երբ՝

- Օրէնքը պահանջում է որ տրամադրենք այդ տեղեկությունը մէկ այլ պետական հիմնարկի կամ
- Այդ տեղեկությունը անհրաժեշտ է Սոցիալական Ապահովության կամ այլ պետական առողջապահական ու նպաստների ծրագրի գործունէության համար:

Ձեր քարտը չտաք ուրիշների եւ չհայտնեք համարը օտարների, որպեսզի անոնք չօգտագործեն ձեր համարը խարդախ նպատակներով: Սոցիալական Ապահովության համարը այլ անհատներու հայտնելը կամավոր է, նոյնիսկ եթէ ձեզանից ուղղակիօրէն պահանջում են զայն: Եթէ ձեզանից պահանջում են ձեր Սոցիալական Ապահովության համարը, հարցրեք թէ՝

- ինչի՞ համար է այն հարկավոր.
- ինչ կերպով պիտի օգտագործվի ձեր համարը.
- ինչ կպատահի, եթէ դուք չհայտնեք ձեր համարը.
- ինչ օրենքով պահանջվում է ձեր համարը:

Այս հարցումների պատասխանները կօգնեն ձեզ որոշել եթէ հարկավոր է հայտնել ձեր Սոցիալական Ապահովության համարը: Որոշումը ձերն է:

Ինչպես կապ հաստատել Սոցիալական ապահովության վարչության հետ

Լրացուցիչ տեղեկություններ ստանալու և մեր հրապարակումների կրկնօրինակները գտնելու համար այցելեք մեր կայքը՝ ***www.socialsecurity.gov*** կամ զանգահարեք անվճար հեռախոսահամարով **1-800-772-1213** (խուլ կամ թույլ լսողությամբ անձինք կարող են զանգահարել հեռատիպի համարով՝ **1-800-325-0778**): Մենք պահպանում ենք բոլոր հեռախոսազանգերի գաղտնիությունը: Եթե իսպանախոս եք, ապա սեղմեք 2: Մյուս բոլոր լեզուների համար սեղմեք 1, սպասեք գծի վրա և լուռ մնացեք անգլերեն ինքնաշխատ հուշումների ժամանակ, մինչև ներկայացուցիչը կպատասխանի: Ներկայացուցիչը կկապվի թարգմանչի հետ, ով կօգնի պատասխանել Ձեր զանգին: Թարգմանչի ծառայություններն անվճար են: Մենք կարող ենք պատասխանել Ձեզ հետաքրքրող հարցերին առավոտյան ժամը 7-ից մինչև երեկոյան ժամը 7-ը, երկուշաբթի-ուրբաթ օրերին: Անգլերեն տեղեկություններ կարող ենք տրամադրել ինքնաշխատ հեռախոսային ծառայության միջոցով՝ օրական 24 ժամ:

Ուզում ենք նաեւ վստահ լինել թէ դուք ստանում եք ճշգրիտ տեղեկություն ու հարգալից ծառայություն: Այդ պատճառով, Սոցիալական Ապահովության երկրորդ ներկայացուցիչ մը հսկում է որոշ հեռախոսազանգեր:

Social Security Administration
SSA Publication No. 05-10002-AM
Your Social Security Number And Card (Armenian)
August 2012